

ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գալուստ Գալոյանի կյանքը և գործունեությունը¹ կարեվորվում են այն արժեքավոր գիտական ժառանգությամբ և մարդկային կերպարով, որ թողել է գիտնականը, պետական ու հասարակական գործիչը:

Գալուստ Գալոյանը ծնվել է 1927 թ. մարտի 1-ին Արթիկի շրջանի Փոքր Պարնի գյուղում, որ այժմ կրում է Մեծ հայրենականում զոհված Անուշավան Գալոյանի անունը:

1945 թ. Գալուստ Գալոյանը ընդունվում է Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, որն ավարտելուց հետո՝ 1955 թ., պաշտպանում է թեկնածուական, իսկ 1963 թ.՝ դոկտորական ատենախոսություն: Նա զավակն էր, կրողը և մասնակիցը իր ժամանակների իրադարձությունների, ինչպես նաև նախորդ շրջանի պատմության հետազոտողն ու վերհանողը: Տասնամյակներ շարունակ Գ. Գալոյանը հետազոտական աշխատանքներում, շնորհիվ իր անադարտ սկզբունքայնության, մեծ խիզախություն ցուցաբերելով, կարողացավ հաղթահարել հայեցակարգային որոշ պատնեշներ:

Գիտնականի կառուցողական սկզբունքայնությունը բխում էր նրա մարդկային բարձր հատկանիշներից, որոնք ժառանգական և բնորոշ են Գալոյան եղբայրներին: Նվիրյալ գրող, հասարակագետ-արվյանագետ, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, Հայրենական մեծ պատերազմի մասնակից Մուսայել Գալոյան, վաստակաշատ դեղագործ, ՀԽՍՀ առողջապահության մինիստրության գլխավոր վարչության երկարամյա պետ, Հայրենական մեծ պատերազմի մասնակից Ալեքսանդր Գալոյան, աշխարհահռչակ կենսաքիմիկոս, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն, Ռուսաստանի և Հայաստանի գիտությունների ակադեմիաների համատեղ «Նեյրոքիմիա» ամսագրի գլխավոր խմբագիր, գիտությունների միջազգային ակադեմիայի և այլ ակադեմիաների անդամ Արմեն Գալոյան: Հայրը՝ անվանի վիրաբույժ Անուշավան Գալոյանը, Հայրենականին մասնակցել է հենց սկզբից. 4-րդ տանկային բանակի N 1000 հոսպիտալի հրամանատարն էր և զոհվել է 1945 թ. Լեհաստանի Բոբժա գյուղում իր հոսպիտալի 350 վիրավորների հետ: Այդ գյուղի դպրոցը կոչվում է նրա անունով: Լեհաստանում Անուշավան Գալոյանը հայտնի էր «Բոգատիրսկի մայր» անվամբ:

Գ. Գալոյանն ընտրեց պատմագիտության պատասխանատու, ջանք ու եռանդ, խոր գիտելիքներ, քաղաքացիական արիություն պահանջող ասպարեզը: Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ և ակադեմիկոս ընտրվելը, ինչպես նաև գիտական և կուսակցական բարձր պաշտոններ զբաղեցնելը նրա համար ինքնանպատակ չէին: Պատմության ինստիտուտում՝ տնօրեն, ՀԿԿ Կենտկոմում՝ քարտուղար, Գիտությունների ակադեմիայի նախագահությունում՝ փոխնախագահ աշխատելիս նրա դեկավարությամբ և մասնակցությամբ պատրաստվել են գիտական կադրեր, ստեղծվել մենագրություններ և կատարվել կոլեկտիվ աշխատանքներ, առաջադրվել և լուծվել հանրապետական և ակադեմիական նշանակության խնդիրներ: Գ. Գալոյանի գործունեությունը բարձր է գնահատվել. նա արժանանացել է Պետական մրցանակի, Աշխատան-

¹ Ձեկուցում՝ կարդացված Գալուստ Գալոյանի 80-ամյակին նվիրված ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի՝ մարտի 1-ի ընդլայնված նիստում:

քային կարմիր դրոշի շքանշանի, Վավիլովի անվան մեդալի և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրերի:

Գ. Գալոյանի գիտակազմակերպչական և պատմագիտական մեծ փորձի շնորհիվ հնարավոր եղավ ստեղծել հայ ժողովրդի պատմության ութհատորյակը: Բացի գիտական խնդիրներ լուծելուց, բազմաթիվ դժվարություններ հաղթահարվեցին այդ հատորները կազմելիս: Պատմության ինստիտուտը, որը հանրապետության գաղափարական կենտրոններից էր, գրաքննության սևեռուն հայացքի տակ էր: Ավագ գործընկերները կարող են վկայել, թե ինչպես ժամանակ առ ժամանակ հարկ էր գիտխորհրդում քննարկել խորհրդային կենտրոն գնացած և հետ եկած բանսարկուական ահազանգերը: Այդ պարագայում Գ. Գալոյանից պահանջվում էր մեծ համբերություն և կորով՝ այդ մեծածավալ աշխատանքը կատարելու համար:

Միակուսակցական գաղափարական կաղապարներից ազատված մեր ժամանակներում քննադատորեն են մոտենում խորհրդային ժամանակաշրջանի պատմագիտության մի շարք դրույթների, որոնք արտացոլվել էին թե՛ հայ պատմաբանների առանձին մենագրություններում և թե՛ հատորներում: Սակայն պետք է նշել, որ հենց այն ժամանակ Գալուստ Գալոյանն առաջիններից էր, որ փորձեց ազատվել պարտադրվող կաղապարներից, գոնե դրանց մի մասից: 1982 թ. լույս տեսավ Գ. Գալոյանի «Պատմության քառուղիներում» մենագրությունը: Գիտնականը քննարկում էր հարցեր, որոնց պատասխանը, թվում է, պետք է տրված լիներ դրանից տասը տարի առաջ հրատարակված «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակի առաջին հատորում:

Ի՞նչն է բնորոշ Գ. Գալոյանի սկզբունքայնությանը: Առաջադրելով հեռանկարային հետազոտությունների անհրաժեշտության խնդիրը՝ նա ոչ թե մերժում էր կատարված աշխատանքը, այլ հայեցակարգային մոտեցումով առաջարկում եղած հիմնադրույթները մտցնել հայագիտական մեթոդաբանության հուն: Ամփոփելով իր եզրակացությունները՝ գիտնականը հանգել է «Հայկական լեռնաշխարհի՝ իր բնօրրանում հայերի ծագման, որպես ժողովուրդ կազմավորման, հայոց լեզվի ձևավորման ու այլ լեզուների հետ ծագումնաբանական կապերի, վաղ հայկական պետականության, մ.թ.ա. IX-VI դարերում Ուրարտու-Հայաստան՝ հայոց պետականության անքակտելի մասը կազմելու հիմնահարցերի պատմաքննական տեսության» ստեղծման անհրաժեշտությանը:

Առավել կարևորվում է այն հանգամանքը, որ այս հիմնահարցերը առաջադրում էր ժամանակակից խնդիրներով զբաղվող գաղափարական ճակատի պատմաբանը: Տասնամյակներ անց աստիճանաբար պարզ դարձավ՝ ինչն էր գիտնականի անհանգրստությունը: Գ. Գալոյանը շատերից ավելի լավ էր իրագրել, թե ինչ հակահայկական տրամադրություններ էին տիրում միութենական վերին ատյանների աղբբեջանամետ, իսկ արտասահմանի որոշ հաստատությունների՝ թուրքամետ շրջանակներում: Եվ պատահական չէր, որ Արցախյան շարժման հենց առաջին օրերին Գալուստ Գալոյանի մասնակցությամբ և խմբագրությամբ լույս ընծայվեց «Нагорный Карабах» փաստաթղթերի ժողովածուն: Իսկ հետագա տարիներին Գ. Գալոյանն իր հետազոտությունների կենտրոնում պահեց Հայկական հարցը և Մեծ եղեռնը՝ միջազգային դիվանագիտության և քաղաքական ընթացքների պատմության համատեքստում: Այս խնդրի գիտական հիմքը կարևորվում է հայերի՝ որպես տեղաբնիկների, իրենց բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում, մշակութաստեղծ և պետական ու հոգևոր պատմություն ունեցող ազգի նշանակության վերհանումը: Գիտնականը լավագույնս տեղյակ էր, որ որոշակի գաղափարական նպատակներով, սկսած XIX դ. երկրորդ կեսից, «գերքննադատությամբ» աղավաղվում էր Հայոց պատմությունը: Մեծ տերությունների մասնակցությամբ հայոց ավելի քան հինգհազարամյա պատմությունը վերածվում էր Հայկական

հարցի՝ հարցականի տակ դնելով Հայոց հայրենիքի և ազգի գոյությունը: Իր կյանքի վերջին տասնամյակում Գ. Գալոյանը հարուստ արխիվային նյութերի հետազոտության հիման վրա երկու հիմնարար մենագրություն հրատարակեց՝ «Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ.» (1999 թ.), և 2004 թ.՝ «Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917թ.)», որոնցում գիտնականը երկու հիմնական միտք է շեշտադրել: Նախ՝ համաձայնելով Հովհ. Թումանյանի տեսակետին, որ «Հայկական հարցը վայրենի կոտորածների և կեղեքումների հարց է, հալածանքների և գաղթականությունների հարց է, նրա գերազանցորեն ֆիզիկական գոյության խնդիր է», պատմաբանը իր հետազոտության մեջ եկել է այն եզրահանգման, որ մեծ տերությունները քաղաքական խարդավանքներով քայլ առ քայլ աճուրդի հանեցին Հայաստանը: «Այդ քաղաքականությունը վերջին հաշվով հանգեցրեց Թուրքիայում հայերի ցեղասպանությանը ու Արևմտյան Հայաստանի կորստին»: Պատմաբանի երկրորդ կարևոր եզրահանգումն է, որ իրավացի էր ամերիկյան հրապարակախոս Էդուարդ Բայրստադը՝ Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ մեծ տերությունների վարած քաղաքականությունը բնութագրելով որպես «մեծ մատնություն»:

Գ. Գալոյանի եզրակացությունները դասեր են՝ ուղղված հայ քաղաքագետների և դիվանագետների նոր սերունդներին: Գիտնականը փաստացի նյութի հիման վրա հստակ ցույց է տվել, որ դարեր շարունակ մեծ տերությունների բանակցությունները հայկական խնդիրների արդարացի լուծման ոչ մի գործնական քայլի չեն նպաստել: Ներկայումս ազատագրված արցախյան տարածքների շուրջ միջազգային հանձնախումբերում ընթացող բանակցությունները կրկին շեշտադրում են այդ դրույթի ճշմարտացիությունը: Քանզի եթե հայ ազատամարտիկը, լսելով Խրիմյան Հայրիկի դասը, թղթե շերտեր փոխարինեց երկաթե շերտերով և իր արյան գնով ազատագրեց հայրենի տարածքները, ապա անհասկանալի էր, թե ինչու հնարավորություն տրվեց ներքաշվելու միջազգային որոշ աստիճաններում ընթացող բանակցությունների ոլորտ, այն էլ ոչ թե հաղթանակի արդյունքները շեշտադրելով, այլ դրանց մեջ անորոշության տրամադրություն սերմանելով:

Գ. Գալոյանի երկրորդ դասն ուղղված էր հենց դաշնակից տերությունների ժառանգորդներին և հայկական կողմի դիրքորոշմանը նրանց նկատմամբ: Ելնելով Լոզանի խորհրդածոլովի արդյունքներից բխող՝ մեծ տերությունների սին խոստումներին «Դեյլի տելեգրաֆի» թղթակցի տված գնահատականից՝ Գալոյանը գրել է. «Դաշնակից տերությունների չհատուցած պարտքը հայ ժողովրդին չի կորցրել իր պատմական վաղեմությունը»: Երրորդ դասը վերաբերում է դիվանագիտական ոլորտներում միջազգային հարաբերությունները կառուցելիս Հայ դատի նկատմամբ համահայկական զգոնությանը: Հայ դատը համահայկական խնդիր է. Արևմտյան Հայաստանի խնդիրը նաև Հայաստանի Հանրապետության խնդիրն է, քանզի թուրքական քաղաքական շրջանակներում արմատացած է հայոց պետականության ոչնչացմամբ հայերի՝ որպես էթնիկական ամբողջության ոչնչացումը: Ներկայումս դա կատարվում է Թուրքիայի կողմից Ադրբեջանի Հանրապետության հովանավորությամբ Հայաստանի Հանրապետությունը շրջափակման մեջ պահելու քաղաքականության իրագործումով: Ժամանակին, ինչպես նշել է Գ. Գալոյանը, Մուսթաֆա Քեմալը Հայաստանի Հանրապետության դեմ ագրեսիա սանձազերծեց՝ Սևրի պայմանագիրը քաղաքական կոնյունկտուրայի փոփոխմամբ մոռացության մատնած և այն ստորագրած երկրների հետ գործարքի մեջ մտնելով: Արդիական հնչեղություն ունի պատմաբանի նաև այն միտքը, որ Հայ դատի լուծմանը խոչընդոտող գլխավոր պատճառը մշտապես գործող թուրքական գործոնն է, քանզի, ինչպես

գրել է հեղինակը. «Ամեն անգամ, երբ Հայ դատը միջազգային դիվանագիտության ատյան է բարձրացել, Արևմտյան Հայաստանի ազատագրման խընդիրը դեմ է առել Թուրքիայում այս կամ այն մեծ տերության շահերին: Եվ Հայ դատը շահարկության առարկա է դարձել Թուրքիայի հետ նրանց ունեցած հարաբերություններում, իսկ հայ ժողովուրդը մոռացության է մատնվել»:

Գ. Գալոյանի դասերից է նաև ձերբագատվել մեր դժբախտությունները միայն դրսի գործոններով բացատրելու կրավորական դիրքորոշումից և տեսնել նաև դրանց ներքին պատճառները:

Այսօր մեր առջև պետականորեն դրվել է հայ ժողովրդի պատմության քառահատորյակի ստեղծման խնդիրը, որի իրականացմանը նույնպես կարող է ծառայել Գ. Գալոյանի այն դասը, որ նման կոլեկտիվ աշխատությունը կարող է գրվել և խմբագրվել հայեցակարգային համախոհությամբ և հայագիտական մեթոդաբանությամբ:

Գ. Գալոյանը իր գիտական վաստակով, մարդկային անբասիր հասկանիչներով, պետական մտածողությամբ, ընտանիքին խոր նվիրվածությամբ հաստատեց մեծ մարդ-քաղաքացու և հայագետ-պատմաբանի բարձր կոչումը:

ԴԱՆԻԵԼՅԱՆ Է. Լ.

Պատմական գիտությունների դոկտոր